



Social Security

Հաշմանդամության
Նպաստներ

www.socialsecurity.gov

Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ

Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, www.socialsecurity.gov պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստներ ստանալու համար,
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցեն.
- ծանոթանալ Ձեր *Social Security Statement (Սոցիալական Ապահովության անձնական հաշվետվությանը)*,
- պահանջել Medicare-ի նոր քարտ և
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները.

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

Չանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքից օգտվելուց կարող եք նաև զանգահարել մեզ անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թե դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Բովանդակություն

Հաշմանդամության Նպաստներ	4
Ով կարող է ստանալ Սոցիալական ապահովության նպաստներ	4
Ես ինչպես եմ դիմում հաշմանդամության նպաստների համար	8
Ես երբ պետք է դիմեմ եւ ինչ տեղեկատվություն է ինձ անհրաժեշտ	8
Ով է որոշում իմ հաշմանդամ լինելը	10
Ինչ է տեղի ունենում, երբ իմ դիմումը բավարարվում է	14
Արդյո՞ք իմ ընտանիքը կարող է նպաստ ստանալ: 14	
Ինչպես են այլ վճարումները ազդում իմ նպաստների վրա	15
Ինչ պետք է հայտնեմ Սոցիալական ապահովության վարչությանը:	16
Երբ ես կստանամ Medicare	17
Ինչ պետք է իմանամ աշխատելու մասին:	17
«Աշխատանքի տոմս» ծրագիրը	18

Հաշմանդամության Նպաստներ

Հաշմանդամությունը մի բան է, որի մասին մարդկանց մեծամասնությունը չի ուզում մտածել: Սակայն, ձեր հաշմանդամ դառնալու հնարավորությունները գուցե ավելի մեծ են, քան դուք կարծում եք: Ըստ ուսումնասիրությունների՝ մինչև կենսաթոշակի անցնելու տարիքը 20-ամյա աշխատողի՝ անաշխատունակ դառնալու հավանականությունը 10-ից 3 է:

Սույն գրքույկում ներկայացված է Սոցիալական ապահովության նպաստների մասին հիմնական տեղեկատվությունը եւ նպատակ չունի պատասխանելու բոլոր հարցերին: Ձեր իրավիճակի մասին որոշակի տեղեկատվության վերաբերյալ դուք պետք է խոսեք Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ:

Մենք վճարում ենք հաշմանդամության նպաստներ երկու ծրագրերի միջոցով. Սոցիալական ապահովության հաշմանդամության ապահովագրության ծրագիրը եւ Լրացուցիչ սոցիալական եկամտի (SSI) ծրագիրը: Սույն գրքույկը Սոցիալական ապահովության հաշմանդամության ծրագրի մասին է: Մեծահասակների համար SSI-ի հաշմանդամության ծրագրի մասին տեղեկատվության համար, տես *Լրացուցիչ Ապահովության Եկամտոր* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-11000-AM): Երեխաների համար հաշմանդամության ծրագրերի համար տեղեկացեք *Նպաստներ հաշմանդամություններով երեխաների համար* հրապարակումից (Հրապարակում թիվ 05-10026-AM): Մեր հրապարակումները մատչելի են օնլայն ռեժիմով՝ www.socialsecurity.gov հասցեում:

Ով կարող է ստանալ Սոցիալական ապահովության նպաստներ

Սոցիալական ապահովությունը վճարում է նպաստներ այն մարդկանց, որոնք չեն կարող աշխատել, որովհետեւ ունեն առողջական վիճակ, որը ակնկալվում է, որ կտեւի առնվազն մեկ տարի կամ կհանգեցնի մահվան: Հաշմանդամության նման խիստ սահմանումը պահանջվում է դաշնային օրենքով: Չնայած որ որոշ ծրագրերով գումարներ են տրվում մասնակի կամ կարճաժամկետ հաշմանդամությանը մարդկանց, սակայն Սոցիալական ապահովությունը չի տալիս:

Նաշմանդամ աշխատողների ընտանիքի որոշ անդամներ նույնպես կարող են փող ստանալ Սոցիալական ապահովությունից: Դա բացատրվում է էջ 14-ում:

Ես ինչպե՞ս եմ բավարարում հաշմանդամության նպաստների հասույթի պահանջներին

Սովորաբար, հաշմանդամության նպաստ ստանալու համար դուք պետք է բավարարեք հասույթի երկու տարբեր չափանիշերին.

1. «Վերջին աշխատանք» չափանիշը, որը հիմնվում է հաշմանդամ դառնալու ձեր տարիքի վրա եւ
2. «Աշխատանքի տեւողության» չափանիշը՝ Սոցիալական ապահովության ներքո ձեր բավականաչափ աշխատելը ցույց տալու համար:

Որոշ կույր աշխատողներ պետք է բավարարեն միայն «աշխատանքի տեւողություն» չափանիշին:

Նետկյալ աղյուսակում նշված են այն կանոնները, որոնցով սահմանվում է, թե քանի տարի դուք պետք է աշխատած լինեք, որպեսզի անցնեք «ոչ վաղուցվա աշխատանքային ստաժի» ստուգումը՝ հաշվի առնելով այն տարիքը, երբ սկսվեց ձեր անաշխատունակությունը: Այդ աղյուսակի կանոնները հիմնված են այն ***օրացուցային եռամսյակի*** վրա, որի ընթացքում լրացել է կամ լրանալու է ձեր որոշակի տարիքը:

Օրացուցային եռամսյակներն են.

Առաջին եռամսյակ. հունվարի 1-ից մինչեւ մարտի 31-ը

Երկրորդ եռամսյակ. ապրիլի 1-ից մինչեւ հունիսի 30-ը

Երրորդ եռամսյակ. հուլիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 30-ը եւ

Չորրորդ եռամսյակ. հոկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը:

«Վերջին աշխատանքի չափանիշի» համար պահանջվող աշխատանքի հետ կապված կանոնները

Եթե դառնում եք հաշմանդամ...	Ապա, որպես կանոն, ձեզ անհրաժեշտ է.
2եր 24 տարեկանը լրանալու կամ դրան նախորդող եռամսյակում	1,5 տարվա աշխատանք եռամյա ժամանակամիջոցում, որը ավարտվում է ձեր հաշմանդամությունը սկսվելու եռամսյակում:
2եր 24 տարեկանը լրանալուց հետո եռամսյակում, բայց ձեր 31 տարեկանը լրանալու եռամսյակից առաջ	Աշխատանք ձեր 21 տարեկանը լրանալու եռամսյակից հետո մինչև ձեր հաշմանդամ դառնալու եռամսյակը ընկած ժամանակամիջոցի կեսի չափով ժամանակի ընթացքում: Օրինակ, եթե դուք հաշմանդամ եք դառնում 27 տարեկան լրանալու եռամսյակում, ապա ձեզ անհրաժեշտ է ունենալ երեք տարվա աշխատանք՝ ձեր հաշմանդամ դառնալու եռամսյակից առաջ ընկած վեց տարվա ժամանակամիջոցում:
2եր 31 տարեկանը լրանալու եռամսյակում կամ դրանից հետո	Աշխատանք հինգ տարվա ընթացքում՝ ձեր հաշմանդամությունը սկսվելու եռամսյակից առաջ ընկած 10-ամյա ժամանակամիջոցում:

Նետեյալ աղյուսակում ցույց են տրված օրինակներ, թե որքան աշխատանք է պահանջվում, որպեսզի բավարարեք «աշխատանքի տեւողություն» չափանիշին, եթե դուք դառնում եք հաշմանդամ որոշակի առանձին տարիքներում: «Աշխատանքի տեւողություն» չափանիշի համար ձեր աշխատանքը պարտադիր չէ, որ ընկնի որոշակի կոնկրետ ժամանակամիջոցում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Սույն աղյուսակը չի ընդգրկում բոլոր իրավիճակները:

«Աշխատանքի տնտրողություն» չափանիշի համար պահանջվող աշխատանքի օրինակները

<i>Եթե դուք հաշմանդամ եք դառնում...</i>	<i>Ապա, որպես կանոն, ձեռք անհրաժեշտ է.</i>
Մինչև 28 տարեկանը	1,5 տարվա աշխատանք
30 տարեկանում	2 տարի
34 տարեկանում	3 տարի
38 տարեկանում	4 տարի
42 տարեկանում	5 տարի
44 տարեկանում	5,5 տարի
46 տարեկանում	6 տարի
48 տարեկանում	6,5 տարի
50 տարեկանում	7 տարի
52 տարեկանում	7,5 տարի
54 տարեկանում	8 տարի
56 տարեկանում	8,5 տարի
58 տարեկանում	9 տարի
60 տարեկանում	9,5 տարի

Ես ինչպես եմ դիմում հաշմանդամության նպաստների համար

Դուք կարող եք դիմել հաշմանդամության նպաստների համար երկու ճանապարհով: Դուք կարող եք.

1. Դիմել օնլայն ռեժիմով՝ www.socialsecurity.gov հասցեում կամ
2. Զանգահարել **1-800-772-1213** մեր անվճար հեռախոսահամարով և գրանցվեք ընդունելության՝ Սոցիալական ապահովության 2-եր տեղական գրասենյակում անաշխատունակության նպաստ ստանալու համար հայտ ներկայացնելու նպատակով, կամ ներկայացրեք 2-եր հայտը հեռախոսով: Անաշխատունակության հայտն ընդունելու համար անցկացվող հարցազրույցը տևում է մոտ մեկ ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, կարող եք զանգահարել մեր անվճար հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**, աշխատանքային օրերին՝ առավոտյան 7-ից մինչև երեկոյան 7-ը: Եթե Դուք գրանցվեք ընդունելության, մենք 2-եզ փոստով կուղարկենք անաշխատունակության նպաստ ստանալու համար հայտ ներկայացնող անձանց փաստաթղթերի լրակազմ, որը 2-եզ կօգնի պատրաստվել հայտն ընդունելու համար անցկացվող հարցազրույցին: Այդ լրակազմը կարող եք ստանալ նաև առցանց՝ www.socialsecurity.gov/disability կայքէջում:

Ես երբ պետք է դիմեմ եւ ինչ տեղեկատվություն է ինձ անհրաժեշտ

Դուք հաշմանդամության համար պետք է դիմեք անմիջապես հաշմանդամ դառնալուց հետո: **Հաշմանդամության նպաստների դիմումի ընթացքը կարող է տևել երկար ժամանակ (երեքից մինչև հինգ ամիս):** Որպեսզի անաշխատունակության նպաստ ստանաք, դուք պետք է լրացնեք սոցիալական ապահովության նպաստների դիմումն ու չափահաս հաշմանդամների զեկույցը: Չափահաս հաշմանդամների զեկույցը կարող եք լրացնել առցանց՝ www.socialsecurity.gov/disabilityreport կայքէջում: Կարող եք նաև տպել այն, լրացնել և տանել սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակ: Մենք կկարողանանք արագացնել ձեր դիմումի գործընթացը, եթե մեզ օգնեք ստանալ անհրաժեշտ մյուս բոլոր տեղեկությունները:

- Մեզ անհրաժեշտ տեղեկատվությունը ներ է առնում.

- Ձեր Սոցիալական ապահովության համարը.
- Ձեր ծննդյան կամ մկրտության վկայականը.
- Անունները, ազգանունները (անվանումները), հասցեները եւ հեռախոսամարները այն բժիշկների, պատրոնաժային բույժքույրերի եւ կլինիկաների, որոնք խնամել են ձեզ եւ ձեր այցելությունների ամսաթվերը.
- Ձեր կողմից ստացվող բոլոր դեղերի անվանումները եւ դեղաչափերը.
- Ձեր տրամադարության տակ արդեն իսկ եղած բժշկական տեղեկանքները ձեր բժիշկներից, թերապեւտներից, հիվանդանոցներից եւ պատրոնաժային բուժքույրերից.
- Լաբորատոր եւ անալիզների արդյունքները.
- Ամփոփոգիր, թե որտեղ եք աշխատել եւ ինչ տեսակի աշխատանք եք կատարել, ինչպես նաեւ
- Ձեր ամենավերջին W-2 ձեւի (Wage and Tax Statement— Աշխատավարձի եւ հարկային քաղվածք) օրինակը կամ, եթե ինքնազբաղ եք՝ ձեր դաշնային հարկային հայտարարագիրը անցյալ տարվա համար:

Բացի հաշմանդամության նպաստների դիմումի հիմնական տեղեկատվության, կան լրացման ենթակա այլ ձեւեր: Մի ձեւը տեղեկատվություն է հավաքագրում ձեր առողջական վիճակի մասին եւ, թե ինչպես է այն ազդում ձեր աշխատանքի վրա: Այլ ձեւերը թույլ են տալիս ձեզ բուժմամբ զբաղվող բժիշկներին, հիվանդանոցներին եւ առողջապահության ոլորտի այլ մասնագետներին մեզ ուղարկելու տեղեկատվություն ձեր առողջական վիճակի մասին:

Մի հետաձգեք նպաստների համար դիմելու հարցը, եթե դուք չեք կարողանում արագ հավաքել այս ամբողջ տեղեկատվությունը: Մենք կօգնենք ձեզ այն հավաքելու գործում:

Ով է որոշում իմ հաշմանդամ լինելը

Մեր կողմից կուսումնասիրվի ձեր դիմումը, որպեսզի երաշխավորվի հաշմանդամության նպաստների որոշակի հիմնական պահանջների բավարումը: Մենք կճշտենք, թե արդյո՞ք դուք աշխատել եք բավարար տարիներ, որպեսզի համապատասխանեք պահանջներին: Մենք նաեւ գնահատելու ենք ներկայումս իրականացվող աշխատանքային գործունեությունը: Եթե դուք բավարարեք այս պահանջներին, ապա մենք կուղարկենք ձեր դիմումը ձեր նահանգի Հաշմանդամության որոշման ծառայությունների գրասենյակին:

Այդ նահանգային գործակալությունը մեր խնդրանքով ավարտի է բերում հաշմանդամության հետ կապված որոշումը: Նրանք կօգտագործեն ձեր բուժմամբ զբաղվող բժիշկներից եւ հիվանդանոցներից, կլինիկաներից կամ հաստատություններից ստացված բժշկական վկայությունը եւ ամբողջ այլ տեղեկատվությունը: Նրանք կհարցնեն ձեր բժիշկներին, թե.

- Ինչպիսիքն է ձեր առողջական վիճակը.
- Ե՞րբ է սկսվել ձեր առողջական վիճակը.
- Ինչպե՞ս է ձեր առողջական վիճակը սահմանափակում ձեր գործունեությունը.
- Ի՞նչ են ցույց տվել բժշկական անալիզները, ինչպես նաեւ
- Ինչպիսի բուժում եք դուք ստացել:

Նրանք նաեւ կխնդրեն բժիշկներից տեղեկատվություն աշխատանքի հետ կապված գործունեություն իրականացնելու ձեր ունակության վերաբերյալ, ինչպես օրինակ, քայլելը, նստելը, բարձրացնելը, հրահանգների կատարելը եւ հիշելը: Ձեր բժիշկներից չի խնդրվում որոշելու ձեր հաշմանդամ լինելը:

Նահանգային գործակալության անձնակազմին կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ տեղեկատվություն նախքան ձեր հաշմանդամ լինելու մասին որոշում կայացնելը: Եթե լրացուցիչ տեղեկատվությունը մատչելի չէ ձեր գործող բժշկական աղբյուրներից, ապա նահանգային գործակալությունը կարող է խնդրել ձեզ անցնելու հատուկ գնություն: Մենք նախընտրում ենք խնդրել ձեր բժիշկին, սակայն երբեմն գնությունը պետք է կատարվի ուրիշի կողմից: Սոցիալական ապահովությունը կհոգա գնության հետ կապված եւ առնչվող ճանապարհային որոշ ծախսերը:

Մենք ինչպես ենք որոշում կայացնում

Ձեր հաշմանդամ լինելը որոշելու համար մեր կողմից օգտագործվում է հինգ-աստիճանի գործընթաց:

1. Արդյո՞ք դուք աշխատում եք:

Եթե դուք աշխատում եք եւ ձեր հասույթի միջինը ամեն ամիս կազմում է որոշակի գումարից բարձր, ապա մենք որպես կանոն ձեզ հաշմանդամ չենք համարի: Գումարը փոփոխվում է ամեն տարի: Գործող թիվը իմանալու համար, տես տարեկան *Տեղեկությունների Նորությունն* 2012թ. (Հրապարակում թիվ 05-10003-AM):

Եթե դուք չեք աշխատում կամ ձեր ամսական հասույթի միջինը հավասար է գործող գումարին կան դրանից փոքր է, ապա նահանգի գործակալությունը այնուհետեւ նայում է ձեր առողջական վիճակին:

2. Արդյո՞ք ձեր առողջական վիճակը «ծանր է»:

Որպեսզի նահանգային գործակալությունը որոշի ձեր հաշմանդամ լինելը, ձեր առողջական վիճակը պետք է էպպես սահմանափակի ձեր ունակությունը հիմնական աշխատանքային գործունեություն վարելու համար, ինչպես օրինակ քայլերը, նստելը եւ հիշելը՝ առնվազն մեկ տարվա ընթացքում: Եթե ձեր առողջական վիճակը այդքան ծանր չէ, ապա նահանգային գործակալությունը ձեզ հաշմանդամ չի ճանաչի: Եթե ձեր վիճակը այդքան ծանր է, ապա նահանգային գործակալությունը կանցնի երրորդ քայլին:

3. Արդյո՞ք ձեր առողջական վիճակը Վատթարացումների ցուցակում (List of Impairments) է:

Նահանգային գործակալությունը ունի Վատթարացումների ցուցակ, որում նկարագրված են այն առողջական վիճակները, որոնք համարվում են այնքան ծանր, որ ինքնաբերաբար նշանակում են, որ դուք օրենքով սահմանված կարգով հաշմանդամ եք: Եթե ձեր վիճակը (կամ առողջական վիճակների համակցությունը) այդ ցուցակում չէ, ապա նահանգային գործակալությունը դիտարկում է, թե. արդյո՞ք, ձեր վիճակը նույնքան ծանր է, ինչ ցուցակում եղած վիճակը: Եթե ձեր առողջական վիճակի ծանրությունը հասնում կամ հավասար է ցուցակագրված վատթարացմանը, ապա նահանգային գործակալությունը կորոշի, որ դուք հաշմանդամ եք: Եթե ոչ, ապա նահանգային գործակալությունը կանցնի չորրորդ քայլին:

4. Արդյո՞ք դուք կարող եք կատարել նախկինում կատարած աշխատանքը:

Այս փուլում նահանգային գործակալությունը որոշում է, թե, արդյո՞ք, ձեր առողջական վիճակը ձեզ խանգառում է կատարելու ձեր կողմից նախկինում կատարած աշխատանքը: Եթե ոչ, ապա նահանգային գործակալությունը կորոշի, որ դուք հաշմանդամ չեք: Եթե այո, ապա նահանգային գործակալությունը կանցնի հինգերորդ քայլին:

5. Արդյո՞ք դուք կարող եք կատարել որեւէ այլ աշխատանք:

Եթե դուք չեք կարող կատարել անցյալում կատարած աշխատանքը, ապա նահանգային գործակալությունը կդիտարկի, թե արդյո՞ք դուք կկարողանայիք կատարել որեւէ այլ աշխատանք: Այն գնահատում է ձեր առողջական վիճակը, ձեր տարիքը, կրթությունը, անցյալ աշխատանքային փորձը եւ ձեր ունեցած հմտությունները, որոնք կարող են օգտագործվել այլ աշխատանք կատարելու համար: Եթե դուք չեք կարող կատարել այլ աշխատանք, ապա նահանգային գործակալությունը կորոշի, որ դուք հաշմանդամ եք: Եթե դուք կարող եք կատարել այլ աշխատանք, ապա նահանգային գործակալությունը կորոշի, որ դուք հաշմանդամ չեք:

Հատուկ կանոններ կույրերի համար

Գոյություն ունի մի շարք այլ հատուկ պայմաններ այն մարդկանց համար, որոնք կույր են: Լրացուցիչ տեղեկատվության համար, խնդրեք *If You Are Blind Or Have Low Vision—How We Can Help* հրապարակումը (*Եթե դուք կույր եք կամ ունեք վատ տեսողություն ինչն է մենք կարող ենք օգնել*, Հրապարակում թիվ 05-10052):

Մենք կտեղեկացնենք ձեզ մեր որոշման մասին

Նահանգային գործակալության կողմից ձեր գործի վերաբերյալ որոշում կայացնելիս, մենք ձեզ նամակ կուղարկենք: Եթե ձեր դիմումը բավարարվում է, ապա նամակում նշված կլինի ձեր նպաստի գումարը եւ ձեր վճարումների սկսվելու ժամկետը: Եթե ձեր դիմումը չի բավարարվում, ապա նամակում կնշվի, թե ինչու, բացատրելով, թե ինչպես բողոքարկել որոշումը՝ դրա հետ անհամաձայն լինելու դեպքում:

Ինչ անեմ, եթե համաձայն չեմ որոշմանը:

Եթե համաձայն չեք ձեր հայտի վերաբերյալ կայացված որոշմանը, ապա կարող եք բողոքարկել այն: Սոցիալական ապահովության վարչության կողմից տրամադրվող «Բողոքարկման գործընթացը» (Նրապարակում թիվ 05-10041) հրապարակման մեջ նկարագրված են գործողությունները, որ կարող եք ձեռնարկել այս ուղղությամբ:

Սոցիալական ապահովության վարչության հետ գործ ունենալիս՝ դուք իրավունք ունեք հանդես գալու փաստաբանի կամ այլ որակավորված անձի միջոցով: Լրացուցիչ տեղեկություններ կգտնեք «Ներկայացուցիչ ունենալու ձեր իրավունքը» (Նրապարակում թիվ 05-10075) հրապարակման մեջ:

Ինչպես ենք կապ հաստատելու ձեզ հետ

Սովորաբար, ձեր նպաստների առնչությամբ ձեզ հետ կապ հաստատելու համար մենք օգտվում ենք փոստից կամ զանգահարում հեռախոսով: Սակայն երբեմն Սոցիալական ապահովության վարչության ներկայացուցիչներն այցելում են դիմողներին: Նախքան նպաստի մասին խոսելը՝ մեր ներկայացուցիչը անձը հաստատող փաստաթուղթ կներկայացնի: Ցանկալի է զանգահարել Սոցիալական ապահովության գրասենյակ՝ տեղեկանալու, թե արդյոք ձեզ մոտ ներկայացուցիչ ուղարկվել է:

Եթե Դուք կույր եք կամ թույլ տեսողություն ունեք, ապա մենք կարող ենք Ձեր ընտրությամբ ծանուցում ուղարկել հետևյալ եղանակներից որևէ մեկով: Տարբերակներն այսպիսին են.

- սովորական տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով
- սովորական տպագիր ծանուցում՝ պատվիրված փոստով
- սովորական տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով, և ստուգիչ հեռախոսազանգ
- Բրեյլի համակարգով ծանուցում և սովորական տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով
- Microsoft Word ձևաչափի նիշք՝ կոնպակտ սկավառակի վրա (CD), և սովորական տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով
- ձայնասկավառակ և սովորական տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով կամ
- խոշոր տպագիր ծանուցում (18 տառաչափ) և սովորական տպագիր ծանուցում՝ առաջին կարգի փոստով

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք մեր կայքի www.socialsecurity.gov/notices էջը կամ զանգահարեք մեզ՝ **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով: Եթե խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ իմ դիմումը բավարարվում է

Մենք ձեզ նամակով կտեղեկացնենք ձեր դիմումի բավարարման մասին, ինչպես նաև կհայտնենք սահմանված ամսական նպաստի չափը և ուժի մեջ մտնելու ամսաթիվը: Ձեր անաշխատունակության ամսական նպաստի չափը որոշվում է՝ հիմնվելով ողջ կյանքի ընթացքում ձեր աշխատած միջին հասույթի վրա: Սոցիալական ապահովության ձեր հաշմանդամության առաջին նպաստը կվճարվի վեցերորդ լրիվ ամսվա համար՝ սկսած ձեր անաշխատունակության օրվանից:

Օրինակ՝ եթե նահանգային գործակալությունը որոշի, որ դուք անաշխատունակ եք՝ սկսած հունվարի 15-ից, ապա ձեր անաշխատունակության առաջին նպաստը կվճարվի հուլիսի համար: Սոցիալական ապահովության նպաստները վճարվում են դրանց հաշվեգրման ամսին հաջորդող ամսվա ընթացքում, այնպես որ դուք ձեր հուլիսի նպաստը կստանաք օգոստոսին:

Դուք նաև կստանաք *What You Need To Know When You Get Disability Benefits* («Ի՞նչ պետք է իմանաք, երբ անաշխատունակության նպաստ եք ստանում») գրքուկի (Նրապարակում թիվ 05-10153) կրկնօրինակը, որը կարևոր տեղեկություններ է պարունակում ձեր նպաստի մասին և ասում է, թե ինչպիսի փոփոխությունների վերաբերյալ պետք է մեզ տեղյակ պահեք:

Արդյո՞ք իմ ընտանիքը կարող է նպաստ ստանալ:

Ձեր ընտանիքի որոշ անդամներ կարող են համապատասխանել նպաստ ստանալու համար անհրաժեշտ պայմաններին՝ ձեր անաշխատունակության հիմքով: Այդ անդամների թվում են.

- Ձեր կինը/ամուսինը, եթե նա 62 կամ ավելի տարեկան է.
- Ձեր կինը (ամուսինը) ցանկացած տարիքում, եթե նա խնամում է ձեր երեխային, որը 16 տարեկանից փոքր է կամ հաշմանդամ է.

- Ձեր ամուրի գավակը, այդ թվում՝ որդեգրված գավակը կամ, որոշ դեպքերում, խորթ գավակը կամ թոռը: Երեխան պետք է լինի 18 տարեկանից ոչ բարձր 19-ից, եթե հաճախում է տարրական կամ միջնակարգ դպրոցի առկա ուսուցման բաժին, և
- Ձեր ամուրի երեխան՝ 18 տարեկան կամ ավելի մեծ, եթե նա ունի հաշմանդամություն, որը սկսվել է 22 տարեկանից առաջ: (Երեխայի հաշմանդամությունը նույնպես համապատասխանում է մեծահասակների սահմանմանը):

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Որոշ դեպքերում ամուսնալուծված կինը (ամուսինը) կարող է բավարարել ձեր հասույթի հիման վրա նպաստների պահանջներին, եթե նա ամուսնացած է եղել ձեզ հետ առնվազն 10 տարվա ընթացքում, ներկայում ամուսնացած չէ եւ առնվազն 62 տարեկան է: Ամուսնալուծված կնոջը (ամուսնուն) վճարված գումարը չի կրճատում ձեր նպաստը կամ ձեր ներկայիս կնոջը (ամուսնուն) կամ երեխաներին հասանելիք նպաստները:

Ինչպես են այլ վճարումները ազդում իմ նպաստների վրա

Եթե դուք ստանում եք այլ նպաստներ, ապա դա կարող է ազդել ձեր կողմից ստացվող հաշմանդամության նպաստների չափի վրա: Լրացուցիչ տեղեկատվության համար դուք պետք է ծանոթանաք հետևյալի հետ.

- *How Workers Compensation And Other Disability Payments May Affect Your Benefits* հրապարակման (Ինչպես աշխատողների փոխհատուցումը եւ հաշմանդամության այլ նպաստները կարող են ազդել հաշմանդամության նպաստների վրա, Տրապարակում թիվ 05-10018: Հասանելի է միայն անգլերեն լեզվով.) հետ.
- *Windfall Elimination Provision* հրապարակման (Չակնկալված եկամտի բացառման սպահովում, Տրապարակում թիվ 05-10045: Հասանելի է միայն անգլերեն լեզվով.) հետ, ինչպես նաև
- *Government Pension Offset* հրապարակման (Կառավարական կենսաթոխակի փոխհատուցում, Տրապարակում թիվ 05-10007: Հասանելի է միայն անգլերեն լեզվով.) հետ:

Դուք կարող եք ստանալ այս հրապարակումները մեր վեբ կայքից կամ կարող եք դիմել մեզ՝ դրանք ստանալու համար:

Ի՞նչ պետք է հայտնեմ Սոցիալական ապահովության վարչությանը:

Եթե ունեք ձերբակալության չկատարված հրաման

Դուք պետք է մեզ տեղյակ պահեք, եթե Ձեր հանդեպ ձերբակալության հրաման է արձակվել՝ հետևյալ հանցագործություններից որևէ մեկի համար.

- փախուստ՝ քրեական հետապնդումից կամ ազատագրկումից խուսափելու նպատակով
- փախուստ կալանքից և
- փախուստ դեպքի վայրից

Դուք չեք կարող օգտվել այն ամսվա հաշվեգրված անաշխատունակության կանոնավոր նպաստներից կամ կուտակված գումարներից, որի ընթացքում Ձեր հանդեպ վերը նշված հանցանքներից որևէ մեկի համար ձերբակալության չկատարված հրաման կա:

Եթե Դուք դատապարտված եք հանցագործության համար

Եթե Դուք դատապարտված եք հանցագործության համար, անմիջապես տեղյակ պահեք Սոցիալական ապահովության վարչությանը: Անաշխատունակության հաշվեգրված նպաստներն ու կուտակված գումարները չեն վճարվում այն ամիսների համար, որոնց ընթացքում անձը կալանավորված է հանցագործության համար, սակայն այդ անձի ընտանիքի ցանկացած անդամ, ով նպաստներ է ստանում նրա անաշխատունակության հիմքով, կարող է շարունակել ստանալ դրանք:

Նաշվեգրված ամսական նպաստներն ու կուտակված գումարները չեն վճարվում հանցանք կատարած և դատարանի որոշմամբ՝ պետության հաշվին ազատագրկման մեջ պահվող անձի: Սա կիրառելի է այն դեպքերում, երբ այդ անձին ճանաչել են.

- անմեղ՝ հոգեկան խանգարման կամ այլ նմանատիպ գործոնների պատճառով (օրինակ՝ հոգեկան հիվանդության, մտավոր թերության կամ անմեղսագիտակության), կամ
- անմեղսունակ՝ դատարանի առջև կանգնելու համար

Եթե Դուք խախտում եք պայմանական վաղաժամկետ ազատման կամ փորձաշրջանի պայմանը

Դուք պետք է հայտնեք մեզ, եթե խախտում եք դաշնային կամ նահանգային օրենքի համաձայն սահմանված փորձաշրջանի կամ պայմանական վաղաժամկետ ազատման պայմանը: Դուք չեք կարող ստանալ անաշխատունակության նպաստներ կամ կուտակված գումարներ, որոնք հաշվեգրված են խախտված փորձաշրջանի կամ պայմանական վաղաժամկետ ազատման ամիսներին:

Եթե ես կստանամ Medicare

Դուք ինքնաբերաբար կստանաք Ձեր Medicare-ի վճարումները՝ երկու տարի անաշխատունակության նպաստ ստանալուց հետո:

Ի՞նչ պետք է իմանամ աշխատելու մասին:

Սոցիալական ապահովության անաշխատունակության նպաստ ստանալու ընթացքում Դուք կարող եք փորձել կրկին աշխատել: Սոցիալական ապահովության վարչությունն ունի հատուկ կանոններ, որոնք կոչվում են աշխատանքի խթաններ: Դրանք հնարավորություն են ընձեռում ստուգելու Ձեր աշխատելու ունակությունը՝ չզրկվելով սոցիալական ապահովության անաշխատունակության նպաստից: Դուք կարող եք նաև աջակցություն ստանալ՝ աշխատանքի համար անհրաժեշտ ուսուցման, աշխատունակության վերականգնման և վերապատրաստման հարցում:

Եթե Դուք աշխատանքի անցնեք կամ սկսեք զբաղվել անհատական աշխատանքային գործունեությամբ, կարևոր է այդ մասին անմիջապես տեղեկացնել մեզ: Մենք պետք է իմանանք՝ երբ եք Դուք ընդունվել աշխատանքի կամ թողել աշխատանքը, և արդյոք փոխվել են Ձեր պարտականությունները, աշխատանքային ժամերը կամ աշխատավարձի չափը: Դուք կարող եք զանգահարել մեզ **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով: Եթե խոլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Աշխատանքի վերադառնալու գործում աջակցություն ստանալու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք «Նաշանանդամության ընթացքում աշխատելը՝ մենք ինչպես կարող ենք օգնել» (Նրապարակում թիվ 05-10095) հրապարակումը: Զբաղվածության աջակցության մեր բոլոր ծրագրերի ուղեցույցը կարող եք գտնել մեր Red Book, *A Summary Guide to Employment Support for Individuals with Disabilities Under the Social Security Disability Insurance and Supplemental Security Income Programs* (Նրապարակում թիվ 64-030) («Կարմիր գիրք. Սոցիալական ապահովության և Լրացուցիչ սոցիալական եկամուտի շրջանակներում հաշմանդամ անձանց պրաղվածության մասին ամիտի ուղեցույց») հրապարակման մեջ: Կարող եք նաև այցելել մեր կայքը՝ www.socialsecurity.gov/work:

«Աշխատանքի տոմս» ծրագիրը

Այս ծրագրի շրջանակներում՝ սոցիալական ապահովության և Լրացուցիչ ապահովության եկամուտի անաշխատունակության նպաստառուները կարող են դիմել անվճար աջակցության՝ աշխատանքի անցնելու համար անհրաժեշտ վերապատրաստում և այլ ծառայություններ ստանալու համար: Նպաստառուների մեծամասնությունը կստանա «տոմս», որով կարող է դիմել պահանջվող ծառայությունները մատուցող նախընտրելի մատակարարին: Այս ծրագրի մասին ավելին իմանալու համար պահանջեք *Your Ticket to Work* (Նրապարակում թիվ 05-10061) («Աշխատանքի Ձեր տոմսը») հրապարակումը:

www.socialsecurity.gov



Social Security Administration
SSA Publication No. 05-10029-AM
Disability Benefits (Armenian)
June 2012

